**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«23» Օգոստոսի 2013թ. թիվ 722-Ա

# ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության նախարարին կից կոլեգիայի 2013 թվականի հուլիսի 22-ի նիստի որոշումը, նպատակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգչային ցանցի անվտանգությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի մայիսի 1-ին թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 12-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը

հրամայում եմ՝

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության համակարգչային ցանցի անվտանգության կարգը>>՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության

Ֆինանսների նախարարի

2013 թվականի օգոստոսի<<23>>-ի N 722-Ա հրամանի

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության համակարգչային ցանցի (այսուհետ՝ համակարգչային ցանց) անվտանգության կարգը:
2. Համակարգչային ցանցի յուրաքանչյուր օգտատիրոջը (այսուհետ՝ օգտատեր) համակարգչային ցանցից օգտվելու համար (համակարգչից, տվյալների հենքերից, ինֆորմացիայի փոխանցման համակարգերից, ցանցային տպիչ սարքերից և այլ) ցանցի ադմինիստրատորի կողմից տրվում է իրավունք (անուն և գաղտնաբառ):
3. Սույն կարգի իմաստով օգտատեր է համարվում Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության այն աշխատակիցը, ում իրավունք է վերապահված օգտվել համակրգչային ցանցից:
4. Յուրաքանչյուր օգտատեր իր կողմից շահագործվող համակարգչում չպետք է ունենա ադմինիստրատորի իրավունք:
5. Յուրաքանչյուր օգտատերի գաղտանաբառը պետք է բաղկացած լինի առնվազն 6 նիշից՝ միաժամանակ տառերից,թվերից և սիմվոլներից:

6. Արգելվում է համակարգիչների տեղաշարժը առանց համակարգչային տեխնոլոգիայի սպասարկման վարչության պետի գրավոր համաձայնության:
7. Յուրաքանչյուր Օգտատեր պարտավոր է համակարգչային ցանցում գրանցվելու օրվանից յուրաքանչյուր 90-րդ օրը փոխել իր գաղտնաբառը:
8. Օգտատերը իրավունք չունի իր գաղտնաբառը փոխանցել այլ անձի:
9. Յուրաքանչյուր օգտատեր պարտավոր է հետևել իրեն ամրակցված համակարգչում տեղադրված հակավիրուսային փաթեթի լիարժեք գործունակությանը:
10. Օգտատերը պարտավոր է իրեն ամրակցված համակարգչի հակավիրուսային ծրագրի միջոցով առնվազն շաբաթական 1 անգամ իրականացնի ստուգում օպերացիոն համակարգը:
11. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության էլեկտրոնային փոստից օգտվող օգտատերը չպետք է կցի 20 Մբ-ից ավելի մեծ ծավալ ունեցող ֆայլեր:
12. Օգտատերը իրավունք չունի իրեն հատկացված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության էլեկտրոնային փոստի գաղտնաբառը փոխանցել մեկ այլ անձի:
13. Հատկացված ցանցային տիրույթներից օգտվելու կանոնները հետևյալն են.
    1. Օգտատերերն իրավունք չունեն տիրույթներից օգտվելու գաղտնաբառը փոխանցել մեկ այլ անձի՝ ով իրավունք չունի օգտվելու տվյալ տիրույթից,
    2. Տիրույթներն հատկացվում են ժամանակավոր ծառայողական տեղեկատվություն (ֆայլեր) պահելու համար և դրանց կորստի դեպքում Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության աշխատակազմի համակարգչային տեխնոլոգիայի սպասարկման վարչությանը պատասխանատվություն չի կրում դրա համար:
    3. Տիրույթներում չի կարելի պահել անձնական ֆայլեր, ֆոտոներ, ֆիլմեր և երաժշտություն:

13. Սույն կարգի խախտումը համարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին կանոնների խախտում և հանգեցնում է իրավական ակտերով սահմանված պատասխանատվության:

14. Սույն կարգի կատարման պատասխանատու է յուրաքանչյուր օգտատեր՝ իրեն ամրակցված համակարգչի մասով: